ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2024 թվականի N 2069 - Ա

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ, 688-րդ հոդվածները, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը, «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե) ամրացված, Երևան, Կենտրոն Վարդանանց փողոց հ. 30 հասցեում գտնվող՝ 2342.5 քառ. մետր մակերեսով 1-ին մասնաշենքը, 1292.3 քառ. մետր մակերեսով 2-րդ մասնաշենքը, 176.7 քառ. մետր մակերեսով սպորտդահլիճը, 13.4 քառ. մետր մակերեսով կաթսայատունը և դրանց զբաղեցրած՝ օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.45406 հա հողամասը (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 07032013-01-2229, այսուհետ՝ անշարժ գույք) անհատույց,

անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել «Ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (գրանցման համար 222.210.1282816, այսուհետ՝ կազմակերպություն):

2. Կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում, Կադաստրի կոմիտեի ղեկավարի հետ համատեղ, օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցնել «Ռոբերտ Սահակյանցի անվան անիմացիոն արվեստանոց» հասարակական կազմակերպության հետ 2014 թվականի օգոստոսի 6-ին կնքված՝ Երևան, Կենտրոն Վարդանանց փողոց հ. 30 շենքի 1-ին հարկից 620.3 քառ. մետր մակերեսով տարածքի թիվ 73/0014 անհատույց օգտագործման պայմանագրից ծագող գրանցված իրավունքը՝ դադարեցման հետ կապված ծախսերն իրականացնելով կոմիտեի միջոցների հաշվին.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո երկամսյա ժամկետում կազմակերպության հետ կնքել սույն որոշման առաջին կետում նշված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր)՝ դրանում նախատեսելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերն իրականացվելու են կազմակերպության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ